



ՀՈԼԱՆԳԻՍՅԻ ՀԱՅԵՐԸ

(Դրվագներ անցյալին)

Աստանդական հայ ժողովուրդին երբեմնի շենշող հայ գաղութներին մին եղած է Ամստերդամը, ԺԸ դարուն սկիզբը, Կիլիկիո և Զմյուռնիո հայ վաճառականներու հոն հաստատվելովը:

Այս գաղութը բարգավաճ շրջան մը ունեցած է մոտավորապես 200 տարի շարունակ, Ամստերդամի մեջ առևտրական ապարեզին տիրանալով և տեական հայ կյանքին հավատալովը՝ հաստատելով հայկական տպարան և եկեղեցի:

Հեհաստանի և Տրանսիլվանիո մեջ ապրած և կորսված հայ գաղութներուն նման, Հոլանդիայի հայ գաղութն ալ, մեկ մասը ցրվելով, մեկ մասն ալ ձուլվելով անհայտացած է իսպառ, պատմության ձգելով անցյալի հիշատակ և անուն:


Հոլանդիայի մեջ իբրև անցորդ առաջին հայ քահանան եղած է Տ. Մարկոս քահանա Արքահամյան:

Հայերը բազմանալով, 1663-ին տուն մը վարձելով, Ս. Կարապետ անունով մատուռ մը կհիմնեն, իրենց առաջին հոգևոր հովիվը ունենալով Կարապետ վարդապետը, որ սուհուն հոլանդերեն խոսող մը եղած է և մեծ ծառայություններ մատուցած է Ոսկան վարդապետի տպագրական դործունեության: Տարիներ հետո, հայերը շենք մը դնելով, եկեղեցի մը կշինեն Ս. Հոգի անունով: 1715-ին կգիմեն Աստվածատուր կաթողիկոսին, եկեղեցիին օծումը խնդրելով:

1733-ին Ամստերդամ կուգա ամասիացի Հովհաննես վարդապետը, որ մեծ հոգածություն կուտա եկեղեցիի զարդարումին և հարգարումին և 1749-ին նորոգությունները կըլլան իր ծախքերովը:

Դրսի դռան վրա քանդակված է մարմարյա դրոշակիր Գառն Աստուծո խաչանիշը 1714 թվականին, իսկ փորագրված է հայերեն տառերով հետևյալ արձանագրությունը.

«Վերստին նորոգեցի դուռն ի բին հայոց ՌՅՂԸ հանդերձ աստիճանօ վերին և ննջեալ ծնողացն» (տե՛ս նկարը):



ԱՄՍՏԵՐԴԱՄԻ ՀԱՅՈՑ Ս. ՀՈԳԻ ԵԿԵՂԵՑՈՒ
ԴՐՍԻ ԴՈՒՌԸ

ներքին երիւք լուսամտօ: Ծախիւք ի սոյն Սբ. Հոգի եկեկեցոյ սպասաւորի, Մինասի որդի Յովհաննէիսի վարդապետի Ամասացոյ, ի վեշտասաներորդում ամի սպասաւորութեան իւրոյ: Յիշատակ իւր և զիւր

Իսկ ներքին դռան մարմարի վրա փորագրված է, դարձյալ հայերեն տառերով, հետևյալ արձանագրությամբ.

«Վերանորոգեցաւ զուսս ի բուրջ Փրկչին 1749, հանդերձ լայնացմամբ և բարձրացումամբ գաւթին և մարմարոնեայ սալակապիւ ընդ որմայն և գեղեցկապէս ծաղկմամբ առաստաղին:

Արդեամբ Զուղայեցոյ Տէր Առաքելեց Պօղոսի որդի պարոն Առաքելին: Յիշատակ իւրն և զիւր հաւգուցեալ ծրնօղ զհօրն Պօղոսին և զկենդանի մօրն Վալիդային»:

Այս երկու արձանագրությունները ցայսօր կմնան անվթար և ընթեռնելի, սակայն եկեղեցին և երկհարկանի սենյակները կօգտագործվին կաթոլիկ կրոնամտութիւններու կողմէ իբրեւ դպրոց:

Հայկական առաջին տպարանին դրերն ու գույքերը ձեռք անցուցած է Վենետիկի Մխիթարյան միաբանությունը: Հետզհետեւ, հայերուն նոսրացումով, եկեղեցիին հասույթները կպակսին, ինչպէս նաեւ եկեղեցիին կապված ծովսերուն թիվը, որով Տ. Դանիել քահանան, հուսահատ ու դժգոհ, եկեղեցին փակելով կհեռանա երկրեն 1806-ին:

Այդ թվականին արդեն դադարած են հայ լեզուն և եկեղեցական արարողությունները, սակայն եկեղեցիին սենյակները կօգտագործեն մնացած հայերը, իսկ Ամատերդամի

մեջ ամենավերջին հայու՝ զմյուռնացի Ստեփան Գաբրիելյանի մահով եկեղեցին ի սպառ կփակվի 1835-ին, անոր տեր կկանգնի քաղաքին նոտարությունը: Հոլանդիայի հայ գաղութը կապված էր Զմյուռնիո առաջնորդական թեմին, անկե ստանալով հրահանգները և ըլլալով համարատու մինչև վերջը:

Այժմ Հոլանդիայի մեջ կապրին հազիվ 15 ընտանիք հայեր, բոլորն ալ բարեկեցիկ: Վերջերս Հռոմաստանեն գաղթած են հինգ ընտանիք հայեր, որոնց երեք ընտանիքը կապրի Ամսթերտի մեջ, երկուքը՝ Ռոտտերդամ: Ուտրեխի մեջ կա ընտանիք մը և անձ մը, իսկ մայրաքաղաքին մեջ՝ Ամստերդամ, կան 7—8 ընտանիք, գորգավաճառությամբ զբաղող:

Այժմ հայ կյանք չկա, խառն ամուսնություններու հետեանքով: Ամենածանոթ հայեր են գորգավաճառ Գինեպանյան եղբայրները, որոնք հակառակ իրենց զբաղած վիճակին, հայրենասիրաբար կօգնեն իրենց դիմող տեղացի կամ անցորդ հայերուն, և իրենց քնակարանը դարձած է տեսակ մը լանպաշտօն հյուպատոսարան հայոց: Իսկ տիկնայք Գինեպանյաններ հաճույք կզգան հայերեն խոսիլ, երբ հայ հյուրեր կընդունին իրենց տան մեջ հաճախակի:

ՄԻՆԱՍ ԶԻՀԱՆՅԱՆ

